

զեսպան առ թիմուր Ռուրի կոնդալէս ար Քլավիխոյ կը վկայէ որ թիմուր «յառաջացաւ զէպի Դամասկոս, որուն քաղաքին բնակչութեան զէմ շատ զայրացած էր, որովհետեւ հարկ չէին վճարեր, անիկա բանտարկեց անոնց զեսպանները, եւ մտաւ իրենց քաղաքն ու կործանեց: Ետը անոնք որ արուեստէ կը հասկնային՝ իր հետ Սըմըրզանտ տարաւ, Սպիտակ թափարներու (Ալ Գոյունլու) եւ Սերաստիոյ քաղաքին բնակչութեան հետ, որոնց շարքին էին բազմաթիւ հայ Քրիստոնէաներ»<sup>(67)</sup>:

Անտարակոյս թիմուրի գերի տարած հայ արուեստագէտներուն կարգին նշանակելի տեղ կը զբաւէին գորգագործները, որոնց նախնիքը Սերաստիոյ մէջ հազիւ դար ու քառորդ առաջ այնքան մեծ համբաւ կը վայելէին:

Թիմուրէն դար մը վերջն ալ, Սուլթան Սէլիմ, 1514ին «անցած ըլլալով թորաթ, հասաւ Սվազ եւ անկէ ալ Երզնկա, մեծ կողողուտ բնելով, եւ բնակչութեան շատեր զրկելով Ամասիա ու Կ. Պոլիս, զլիաւորաբար արուեստագէտներ ու ճարտար արհեստաւորներ»<sup>(68)</sup>:

Հետաքրքրական է որ Հայերը թուրքերուն կողմէ առ հասարակ գերեզմանութեան «սպրանք» չէին նկատուեր, ինչպէս Յոյնը, Սլաւը, Վրացին, Չեքքէզը կամ ուրիշ ժողովուրդներ, որոնք զժրախտութիւնը կ'ունենային թուրքերուն ձեռքն իյնալու արշաւանքներու տակ: Այս մասին փոքր ապացոյց մը ունինք ճորճ Սանտիս անգլիացիին ուղեգրութեանց մէջ 1610էն: Ան խօսելով Գահիրէի հայոց մասին, կը վկայէ. «Հայերը ամէնէն աղքատներն են, եւ ամէն տեղ ամենապատուաւորները, տքնաջան աշխատելով եւ ժուժկալ ապրելով: Անոնք որ թուրքերուն հպատակ չեն, եթէ պատերազմի մէջ զերուին, ստրկութենէ ազատ կը կացուցուին, եւ կ'աղբին ազատութիւն, եւ մանկատուրք չեն տար ինչպէս միւս քրիստոնէաները (Ենիչէրի ըլլալու համար. Յ. Ք.): Այս առանձնաշնորհումը անոնք կը վայելեն, որովհետեւ հայ մը գուշակեր է Մուհամմէտի փասքն ու մեծութիւնը»<sup>(69)</sup>:

Անտարակոյս անգլիացիին հայերէ (ի Գահիրէ) ստացած է իր այս տեղեկութիւնները: Իրականութիւն է որ թէ՛ թուրքերը եւ թէ՛ պարսիկները իրենց արշաւած եւ զբաւած երկիրներուն հայութիւնը գերի տարած են առանց զանոնք ստրկացնելու, բայց միայն բռնագաղթի ենթարկած են: Իրաւ է, եղած են նաեւ ստրկութեան տարուած գերի հայեր ալ, որոնց գերեթափութեան համար յիշատակութեանց կը հանգիպինք մեր պատմութեան մէջ, սակայն առոնք աւելի բացառութիւններ են, ինչպէս բացառութիւններ են հայ Ենիչէրիներու զոյութիւնը: Մանկահաւաքումը Ենիչէրի զօրարանակներ պատ-

(67) Narrative of the... London, 1859.

(68) Narrative... G. M. Angiolelle. 1878, London, p. 119.

(69) A Relation of a Journey Begun An. Dom. 1610, London, 1627, p. 122.